

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«-----» ----- 2018թ.

N----- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N 87-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02082016-01-0176 վկայական) 74.1 քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, երկու տարի ժամկետով, տրամադրել «Հայելի ակումբ» ժողովրդավարության աջակցության հասարակական կազմակերպությանը:

2. Ընդունել ի գիտություն, որ Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկում գտնվող 74.1 քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագիրը ենթակա է կնքման նույն հարկում «Հայելի ակումբ» ժողովրդավարության աջակցության հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված 36.9 քմ մակերեսով տարածքը Երևան համայնքին ետ հանձնելու և հանձնման-ընդունման աշխատանքները իրականացնելուց հետո:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱՂԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Երևանի քաղաքապետարան է դիմել «Հայելի ակումբ» ժողովրդավարության աջակցության հասարակական կազմակերպության նախագահ Ա.Թովմասյանը՝ Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկում կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված **36.9** քմ մակերեսով տարածքը ետ վերցնելու և նույն հարկում գտնվող **74.1**քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով կազմակերպությանը տրամադրելու խնդրանքով:

Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.**02082016-01-0176** վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Քննարկվող **74.1**քմ մակերեսով տարածքը ՀՀ կառավարության **2008** թվականի մայիսի **8**-ի հ.**640**-Ա որոշմամբ ամրացվել է «ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին /իրավահաջորդը՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե/, սակայն այն ներկայումս կոմիտեի կողմից փաստացի չի օգտագործվում և տարածքի նկատմամբ սահմանված կարգով իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի **36.9**քմ մակերեսով տարածքը Երևան քաղաքի ավագանու **2013** թվականի սեպտեմբերի **10**-ի N **48**-Ա որոշման հիման վրա անհատույց օգտագործման իրավունքով զբաղեցված է «Հայելի ակումբ» ժողովրդավարության աջակցության հասարակական կազմակերպության կողմից, որը պարբերաբար կազմակերպվող հանրային միջոցառումների ժամանակ, անհրաժեշտության դեպքում, օգտագործում է նաև Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի **74.1**քմ մակերեսով տարածքը:

Հաշվի առնելով ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի **14.12.2017**թ. հ.**02/16.3/7509-17** գրությամբ տրված համաձայնությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Հայելի ակումբ» ժողովրդավարության աջակցության հասարակական կազմակերպության արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է լրացուցիչ տարածք, ինչը կնպաստի տեղեկատվության մատչելիության ապահովման, զարգացման և տարածման, ազգային ավանդույթների պահպանման, Հայաստանում ժողովրդավարության խթանման ու զարգացման նպատակով կազմակերպության կողմից տարվող աշխատանքներին, ինչպես նաև համանման դեպքերում հասարակական կազմակերպությունների և միավորումների մասով ձևավորված մոտեցումը՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

Հարկ է նշել, որ «Հայելի ակումբ» ժողովրդավարության աջակցության հասարակական կազմակերպությունը հրաժարվում է անհատույց օգտագործման իրավունքով կազմակերպությանը տրամադրված **36.9**քմ մակերեսով տարածքից և նոր տրամադրվող տարածքի մասով անհատույց օգտագործման պայմանագիրը ենթակա է կնքման այն Երևան համայնքին հանձնելուց՝ ընդունման հանձնման աշխատանքները իրականացնելուց հետո:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱՂԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքից
անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» որոշման նախագծի
ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի
փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ